Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Պ-743[4]-14.12.2023-ՄԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-139-Ն օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 222.11-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1.«Ընտանեկան եւ կենցաղային բռնության կանխարգելման եւ ընտանեկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով սահմանված՝ անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող հայցադիմումի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով սույն գլխի առանձնահատկությունները»:

Հոդված 2. Օրենսգրքի 222.11-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. «Ընտանեկան եւ կենցաղային բռնության կանխարգելման եւ ընտանեկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով սահմանված՝ անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող հայցադիմումի պարագայում դատարանը սույն օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասում նշված որոշումներից մեկը կայացնում է հայցադիմումն ստանալուց հետո՝ 36 ժամվա ընթացքում»:

Հոդված 3. Օրենսգրքի 222.11-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3.Անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկման վերաբերյալ գործերով ծանուցագիրը հայցվորին, պատասխանողին եւ ընտանեկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձին կամ նրա օրինական ներկայացուցչին ուղարկվում է դատական նիստը նշանակվելուց հետո՝ անհապաղ: Հրապարակային ծանուցումը չի կարող օգտագործվել որպես ծանուցման եղանակ»:

Հոդված 4. Օրենսգրքի 222.11-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. «Ընտանեկան եւ կենցաղային բռնության կանխարգելման եւ ընտանեկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով սահմանված՝ անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող հայցադիմումը դատարանը քննում եւ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 48 ժամվա ընթացքում»:

Հոդված 5. **Եզրափակիչ մաս**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ» ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-139-Ն օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 222.11-րդ հոդվածի 1-ին մասը ~~խմբագրել հետեւյալ բովանդակությամբ~~ շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1.«Ընտան~~ի~~եկան~~իքում~~ եւ կենցաղային բռնության կանխարգելման ~~եւ,~~ ընտան~~ի~~եկան~~քիում~~ եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության ~~եւ ընտանիքում համերաշխության վերականգնման~~ մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված՝ անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող հայցադիմումի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով սույն գլխի առանձնահատկությունները»:

Հոդված 2. Օրենսգրքի 222.11-րդ հոդվածի 2-րդ մասը ~~խմբագրել հետեւյալ բովանդակությամբ~~ շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. «Ընտան~~իքում~~եկան եւ կենցաղային բռնության կանխարգելման ~~եւ,~~ ընտան~~ի~~եկան~~քիում~~ եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության ~~եւ ընտանիքում համերաշխության վերականգնման~~ մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված՝ անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող հայցադիմումի պարագայում դատարանը սույն օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասում նշված որոշումներից մեկը կայացնում է հայցադիմումն ստանալուց հետո՝ 36 ժամվա ընթացքում»:

Հոդված 3. Օրենսգրքի 222.11-րդ հոդվածի 3-րդ մասը ~~խմբագրել հետեւյալ բովանդակությամբ~~ շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3.Անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկման վերաբերյալ գործերով ծանուցագիրը հայցվորին, պատասխանողին եւ ընտան~~ի~~եկան~~քում~~ եւ կենցաղային բռնության ենթարկված անձին կամ նրա օրինական ներկայացուցչին ուղարկվում է

դատական նիստը նշանակվելուց հետո՝ անհապաղ: Հրապարակային ծանուցումը չի կարող օգտագործվել որպես ծանուցման եղանակ»:

Հոդված 4. Օրենսգրքի 222.11-րդ հոդվածի 4-րդ մասը~~՝ խմբագրել հետեւյալ բովանդակությամբ~~ շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. «Ընտան~~քիում~~եկան եւ կենցաղային բռնության կանխարգելման եւ~~,~~ ընտան~~քիում~~ եկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության ~~եւ ընտանքիում համերաշխության վերականգնման~~ մասին»~~ Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված՝ անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող հայցադիմումը դատարանը քննում եւ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 48 ժամվա ընթացքում»:

Հոդված 5. **Եզրափակիչ մաս**

~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն օրվան հարջորդող տասներորդ օրը:~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից: